ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

«15» փետրվարի 2019թ. № 99-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 83-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 791-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 83-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի վերնագրում, 1-ին կետում և դրանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) «օպերատիվ-հետախուզության» բառերը փոխարինել «օպերատիվ հետախուզության» բառերով:

2) Հավելվածի 1-ին կետի 1.2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.2. Վարչությունն իր գործառույթներն իրականացնելիս ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, «Հարկային ծառայության մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով, սույն կանոնադրությամբ, Կոմիտեի նախագահի (այսուհետ՝ Նախագահ) հրամաններով և այլ իրավական ակտերով:»:

4) Հավելվածի 2-րդ կետի 2.8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2.8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այսուհետ՝ օրենսդրություն) սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում չհաշվառված կամ առանց լիցենզիայի (թույլտվության) կամ տվյալ գործունեությամբ զբաղվելու համար օրենսդրությամբ թույլատրված վայրերից դուրս այդ գործունեությամբ զբաղվող անձանց կողմից ձեռնարկատիրական կամ լիցենզավորման (թույլտվության) ենթակա գործունեությամբ կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնող կամ օրենսդրությամբ արգելված գործունեությամբ զբաղվող անձանց հայտնաբերման, ինչպես նաև ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման պահանջների խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ միջոցների ձեռնարկում:»:

5) Հավելվածի 3-րդ կետը լրացնել նոր՝ 3.12-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3.12. Արագ հակազդման բաժին»:

6) Հավելվածի 4-րդ կետը լրացնել նոր՝ 4.33-րդ և 4.34-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Վարչության արագ հակազդման բաժնի գործառույթներն են.

4.33. Կոմիտեի աշխատակիցների նկատմամբ հակահիրավական գործողությունների կանխում, քննչական և հետախուզական գործողություններ իրականացնող աշխատակիցների անվտանգության ապահովում,

4.34. Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներին, այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին հանցավոր ոտնձգություններից պաշտպանում:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 2/15/2019 14:11:59 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ